

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված
ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման
աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Բագրատաշեն բնակավայրը) ներառող
միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի
փոփոխության վերաբերյալ
(Նոյեմբերյան համայնքի (Բագրատաշեն բնակավայրի) գոյնորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման
13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Բագրատաշեն բնակավայրը) ներառող
միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-5 համակցված տարածական պլանավորման
փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի (Բագրատաշեն բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-016-0236-0105 կադաստրային ծածկագրով 0.017964 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր	11-016-0236-0105 կադաստրային ծածկագրով 0.017964 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել
ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին
համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀԾՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն.
քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական
նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել՝ հաշվի
առնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գրությամբ
տրամադրված «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից նշված պահանջ:

